

նրա գրութիւնից օգուտ քաղել) Բայց թիֆլիսեցիներ աւելի խորամանկ գտնուեցաւ քան թէ ազգայնական նրան ասաց. «պարտն, դու գիտես, որ եթէ ես այս տեղից չը գնամ, քեզ պաշտօնն չեն տայ դպրոցում. ուրեմն ինչ ես տալիս ինձ, որ իմ բացակայութեանս պատճառով դու գործ ես ձարում»։ Խօսեցին միմեանց հետ, բազմա արին, և վերջապէս բարեկեցան, որ թիֆլիսեցիներ սկսեալ յունկար ամսից մինչև ապրիլի վերջը չորս ամսական ռոճիկը կ'անխիլ ստանայ և թողնէ գնաց, իսկ ազգայնական նրա փոխարէն սկսեալ յունկարից չորս ամիս ձրի ծառայէ և միայն իրաւունք ունենայ թիֆլիսեցու վերջին տրեան ստանալու, այսինքն մայիսից մինչև յունիսի վերջը։ Կը նշանակէ, ազգայնական թիֆլիսեցուն չորս ամսական ռոճիկը (175 ռուբ.) կաշառք տուեց, որ կարողանայ նրա պաշտօնը ձեռք բերել։ Բայց թիֆլիսեցիներ դրանով էլ չը բաւականացաւ։—Չէ, ասաց ազգայնացուն, դու մի բան էլ ինձ ձեռքաց պիտի տաս, որ իմ տեղը վարժապետ ես լինում, և պահանջեց 50 ռուբլի։ Իսկ ազգայնական միայն 15 ռուբլի ունէր, 15 էլ այս տողերը գրողից պարտք առեց և տուեց թիֆլիսեցուն և նա էլ թողեց գնաց։

Հիմա տեսէք որտեղ է գլխաւոր ինտրիգը։ Թիֆլիսեցիներ երբ յունկարի սկզբում իր չորս ամսակա ռոճիկը կանխիկ ստանում է՝ հոգաբարձութիւնից, (Ազգայնական ուսուցիչներին միշտ չորս ամսականը կանխիկ են տալիս) ի հարկէ, չը յայտնեց, թէ ինքը գնաւու է, եթէ ասէր, փող չէին տայ. իսկ երբ փողերը ստացաւ և գնում էր, հոգաբարձութիւնը կանգնաւ արգելել նրան, նա ցոյց տուեց ազգայնացուն և ասաց.—ես գնում եմ, բայց իմ տեղը ահա այս մարդուն եմ թողնում իմ պաշտօնը կատարելու, ձեզ համար մի և նոյն է, թէ ես լինեմ և թէ այս մարդը։ Հոգաբարձութիւնը ճարահատեալ ընդունեց։

Ահա այդպէս պ. թ. փ. *) մի վարժապետի կաշառքով, նրա գրութիւնից օգուտ քաղելով, նրան տեղից հանեց և ինքը նրա տեղը մտաւ։ Բայց մի այսպիսի մարդուն ինչ բարոյականութեան տէր կարելի է համարել,—այդ ինքն ըստ ինքեան յայտնի է. միայն պէտք է ասել, որ այն օրից, երբ նա մտաւ դպրոցը, բոլոր կարգերը հետգնահեղ խանդավարեցան, խռովութիւնները օր ըստ օրէ աւելացան։ Նա սկսեց ինտրիգաներ սարքել կրօնու սոյց քահանայի և նրա կնոջ դէմ, որը վարժուհի է դպրոցում, որ այս վերջինիս կարողանայ տեղից հանել և իր կնիքը նրա տեղը դնել. նա ուսուցչական խումբը երկու կուսակցութիւն բաժանեց, և տեղացի ուսուցիչներին թշնամացրեց օտարերկրեայ ուսուցիչներին հետ։ Մենք սովորեցանք նրա պատճառով ուսուցչական ժողովները դադարեցնել, որովհետեւ ամեն անգամ մի խռովութեան առաւելակ էր ներս գցում։ Հոգաբարձութիւն իսկապէս չը կար, որ զսպէր այդ խռովարարին, չորս հոգաբարձուներից երկուքը Մօսկվա էին գնացել, մէկը թիֆլիս, և մնացել էր միայն պ. Մ. Արասխանանցը, որը անհրաժեշտ և փափուկ մարդ էր, որ չէր կարող մի լրբի կրքերը սանահարել, և մանաւանդ գիտէր, որ նա զրոյս աղաներից պաշտպաններ ունի։

Թողնենք ինչ որ նա գործեց ուսուցչական խումբի մէջ և խօսենք այն բանի վրա, թէ ինչ գործեց նա յետոյ, այսինքն մասնաժողովի մէջ, և այսպէսով կը մօտենանք աւարկային, որի պատճառով ես գրում եմ այս նամակը։

Ազգայնիկ իսկապէս շատ անտարբեր են դէպի իրանց դպրոցները. ես այսքան ժամանակ չեմ տեսել մի ազգայնիկ, որ հետաքրքրվէր մտնել դպրոցը և տեսնել, թէ ինչ են շինում ուսուցիչները։ Նըրանք ինչ որ լսում են դպրոցի մասին,—այդ լըսում են բազմաբովանդակ խօսքի համեմատ կարծիք են կազմում դպրոցի վրա։ Խօսողները ըստ մեծի մասին լինում են տեղացի ուսուցիչները, որովհետեւ նրանք աւելի մօտ և ծանօթ են ժողովուրդին։ Դրանք տարածեցին, թէ դպրոցները անկարգ դրութեան մէջ են և պատճառը գլխաւորապէս դրսեցի ուսուցիչներն են։ Կազմեցաւ մասնաժողով, որ պիտի բարեկարգէր դպրոցները մի աղայի նախագահութեամբ, և մնացեալ անդամները նրա փեսաները և ազգականներն էին։ Մեր խաբէրային յաջողեցաւ մտնել մասնաժողովի մէջ, որպէս զբաղիւր նրանց թղթերը գրելու։ Նա այնքան ճարպիկ գտնուեցաւ, որ հենց առաջին նիստից յետոյ մասնաժողովի անդամներին կուսակցական խումբի հետ։ Եւ այստեղից առաջ եկան բոլոր փնտաւար հետեւանքները։

Մասնաժողովի յարաբերութիւնները ուսուցչական

կան խռովութիւն հետ կտրվեցան, և չը նայելով մեր քանիցս անգամ ինտրիգանքը, նա չը կամեցաւ ուսուցչական խումբի հետ մի խառն ժողով կազմել, որ մենք խնդրաման տեղեկութիւն տալիքը դըպրոցների դրութեան մասին։ Մասնաժողովը չը կամեցաւ մինչև անգամ հարցնել մնացած միակ հոգաբարձու պ. Մինաս Արասխանանցին պատահած անցքերի մասին։ Մասնաժողովը իւր տեղեկութիւնները դպրոցների վիճակի մասին հաւաքեց մի խաբէրայ վարժապետի խօսքերից, որ նրանց ժողովի մէջ գրադիր էր, և յայտնի է թէ այս վերջինս ինչ տեսակ սուտ ու սխալ տեղեկութիւններ կը հաղորդէր նրանց։

Պէտք չէ մոռանալ, որ մասնաժողովը չէր նշանակել դպրոցները կառավարելու համար, որպէս հրատարակեցաւ նրա մասին, այլ դպրոցների վերաբերութեամբ նա ունէր միայն իւր վիճակի նշանակութիւն, որ իր քաղած տեղեկութիւնները պիտի հաղորդէր ընդհանուր ժողովին։ Բայց ինչի՞նչով մի անգամ դնէ չը մտաւ դպրոցների մէջ, մի անգամ դնեաւ ուսուցիչների հետ խորհրդակցութիւն չունեցաւ, բայց պատրաստեց դպրոցների վիճակի մասին և ուսուցիչների մասին մի անգլիկ տեղեկագիր, որ պիտի կարգար ընդհանուր ժողովի մէջ։—Այժմ պարզ է, թէ ինչը տրուեց մեզ, ուսուցիչներին, մայիսի 15-ի ընդհանուր ժողովին ներկայանալու, և ինչ էր պատճառը, որ մասնաժողովի նախագահ պ. Տէր-Մկրտչեանցը կամենում էր մեզ հաւածել այնտեղից։

Բայց հետաքրքիր է գիտնալ, թէ ովքեր էին մասնաժողովի անդամները, որ պիտի դպրոցների վիճակը բարեկարգէին։ Նախագահն էր պ. Մ. Տէր-Մկրտչեանցը։ Անդամներն էին՝ առաջին, նախագահի փեսայ Հ. Արասխանանցը, որը յայտնի է մեր գրականութեան մէջ իր յիշած եկեղեցիով, որի մասին ստացաւ տոնամայիս պատուաւոր քաղաքացու տիտղոսը, և որը այս 15 տարի է, վիճում է, թէ դպրոցներում բոլոր առարկաները պէտք է ուսուցաց լեզուով դաս տրվեն, և որի պատճառով առաջին ընդհանուր ժողովի մէջ մի սաստիկ վէճ ունեցաւ պ. Մէլիք-Յակոբեանի հետ։ Երկրորդ անդամն էր նոյնպէս նախագահի փեսան, պ. Յ. Դանաղարեանցը։ Երրորդ անդամն էր նոյնպէս նախագահի փեսան, պ. Խ. Փանեանցը, դա թէ և իսկապէս մարդ է, բայց նախագահի էլան է։ Չորրորդ անդամն էր թ. Փանեանցը, դա նախագահի փեսայի փեսան էր. դա մեր դպրոցի վարժապետներից մէկն էր, որի հետ արդէն ծանօթացրինք ընթերցողին։ Հինգերորդ անդամն էր նախագահի հօրեղբոր որդի Ա. Տէր-Մկրտչեանցը։ Այս բոլորը կապված էին միմեանց հետ իրանց ընթացքով։ Մի մարդ միայն օտար էր զրանց մէջ,—դա էր պ. Բ. Տէր-Մկրտչեանցը, որ մասնաժողովի հենց առաջին նիստում, նկատելով նրանց բռնած ծուռն ընթացքը, այնքան անհիշատակեցաւ, որ գրաւոր կերպով բողբոջելով դուրս եկաւ նրանց միջից, չը կամենալով կցորդ լինել նրանց ինտրիգաներին։

Իսկ ինչ էր մասնաժողովի անդամների բուն նպատակը, ինչու համար նրանք կազմեցին այդ ժողովը, և ինչ էին ցանկանում անել,—այդ հարցերը այնքան հետաքրքիր կողմեր ունեն, որ ես միանգամայն պատասխանել չեմ կարող և թողնում եմ հետեւեալ նամակին։

Կ. Տէր-Խաչատուրեանց
ՆԱՄԱԿ ԱՍՆԱԳԻՍՏԻՑԻ
25 մայիսի

«Մշակի» ընթերցողներին յայտնի է որ Ախալցխայում ղեկավարութիւն կար կազմել մի ընկերութիւն, որի նպատակը պէտք է լինէր զանազան միջոցներով կամաւոր նուէրը հաւաքելով, մի կամ երկու ուսումնարան բանալ Հայաստանում Ախալցխայի շոյ հասարակութեան անունով։ Այս հարցի վերաբերութեամբ ամսիս 7-ին մինչև 30 անձինք ժողովելով հայ-հոգեդասկանաց ընթերցարանում, որոշեցին 1) Կազմել մի մասնաւոր ընկերութիւն, որին անդամակցեն հայ հասարակութեան ամեն զատակարար պատկանող անհատները իրանց ցանկութիւն յայտնողները։ 2) Անդամակցութեան համար սահմանել որոշեալ մշտական վճար յօգուտ ընկերութեան եղևու կարգի. ա. ամսական մի ռ. իւրաքանչիւր անդամից և բ. 50-ական կօպէկ։ 3) Բայց անդամակցութեան վճարից զուտացած գումարից, իւրաքանչիւր անդամ իրան պարտք համարի գործարարել յօգուտ ընկերութեան նաև այն միջոցները, որոնք յայտնված են «Մշակի» № 46-ի մէջ Ախալցխայից գրված «ոմն» ստորագրութեամբ նա-

մակում։ 4) Կազմել առժամանակեայ վարչութիւն, որի պատասխանատուութեան տակ թողուլ մինչև այժմ յօգուտ «Արարատեան ընկերութեան» հաւաքված և ի շահեցողութիւն դրված փողը, մինչև անհրաժեշտեց դրանալիք արդիւնքի քանակութեան պարզվելը և «Արարատեան ընկերութեան» հետ յարաբերութիւն սկսելով, նոյն գործարարութեան միջոցների որոշվելը։ Վարչական պաշտօնների համար ընտրվեցան հետեւեալները, 1) արժանապատիւ Աբրահամ քահանայ Վաղարշանց ընկերութեան նախագահ։ 2) պ. Յովակիմ Վեդալեանց—ատենադպիր։ 3) պ. Արշակ Մաղաթէլեանց—գանձապահ։ 4) և 5) պ. պ. Յակոբ Վասապուլեանց, Դաւիթ Գուգիւրեանց—գանձապահի օգնականներ։ Գլխաւորապէս վերոյիշեալ սկզբունքների վրա հիմնվեցաւ ընկերութիւնը, որի բաժանորդների թիւը առ այժմ 30-ից անցած չէ, բայց յոստով ենք, որ երբ վարչութիւնը սկսի իր գործունէութիւնը, շուտով կաւելանայ բաժանորդների թիւը։ Ցանկալի էր որ ամեն հայաբնակ քաղաքներում կազմվէին սորա նման ընկերութիւններ, որոնք յաճախ պանդուխտ հային միտքը կը ձգէին իր հայրենի տնակը, իր հարազատ եղբայրների թշուառ վիճակը. կը հարկադրէին միշտ կարեկից լինել նոյն և այսպէսով միւս կողմից ներթափան մեծամեծ օգնութիւններ կը հասցնէին «Արարատեան ընկերութեանը» որի բարձր և վստահ նպատակը ամենքի համար յարգելի և համարելի պէտք է լինի։

Ներկողացու Տէր-Գրիգորեանց
ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են ՆՈՒԽՈՒՑ, որ Վարդաշէնի և Ղարաբաղի մէջ սպանութիւնները չափազանց շատացել են։ Մի ամսեայ ընթացքում այդ դիպելութիւն համարեա 17 մարդ են սպանել։

Ահա այս մի քանի օր է, որ թիֆլիսում յայտնվեցաւ մօրիս. երկիւղեք խմբերով կոտորում են նրանց, բայց ի հարկէ դրանք չեն կարող բոլորը ոչնչացնել։ Եւրոպ. այդ մօրիկի, հացի զինը նըկատելի կերպով բարձրացաւ։

ՆՈՒԽՈՒՑ մեզ հաղորդում են, որ տեղացիք արհամարհանքով էին նայում գիւղատնտեսական պարագմունքներին, չը նայելով, որ երկիրը շատ յարմար է մշակութեան համար։ Այժմ երբ վաճառականութիւնը ընթում է, նոր են աչք բաց անում և զգում այդ արդիւնաւոր պարագմունքը նշանակութիւնը։ Այժմ նուրբեցիներից մի քանիսը սկսել են ծխախոտ ցանել քաղաքի շրջակայքում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԲԵԼԳԻԱ

Բելգիայում թէ հասարակական կարծիքը, թէ մամուլը, և թէ ազգային ժողովի ներկայացուցիչները, ամենքն էլ բացառապէս զբաղված են 1842 թվ. օրէնքի վերաքննութեան հարցով։ Սքանդալները կատարելապէս զգուշեցրին իրանց զանազան գիւղացի ու զաւառացի քահանաների ծարտասանութիւններով. մի վարդապետ բարձրանում է բեմը, ամենքը ստիպված են նրան լսել, և այդ միայն նրա համար, որովհետեւ խօսքի հերթը նրանն է։ Վերջապէս բազմաթիւ չնչին ճառախօսներից յետոյ, բարձրացաւ ամբիօնի վրա պ. Յակոբը, որը, չը նայելով, որ պատահում էր քաղաքական կուսակցութեանը, բայց կարելի է խոստովանել, որ զոնէ սա գիտէր խօսակցութեան գեղեցիկ ձևը, նրա ձայնը շատ դուրեկան ու ներգրանակ էր, նրա ատենախօսութիւնը շատ անգամ վստահեցնում էր հասնում մի խօսքով սա այն ատենախօսներիցն էր, որին կարելի էր առանց ձանձրանալու, մինչև իսկ մի առանձին գուարճութեամբ լսել։

Պ. Յակոբի խօսակցութեան նիւթը անասունաւորութիւնն էր, շատ լաւ նիւթ է բնորոշ պարները, դա շատ յարմար է պ. Յակոբի պէս մի ջերմեւանդ կաթօլիկի համար։

Պատուելի հոետորը երկարատեւ ծափահաւորութիւններ ստացաւ աջակողմից, ձախակողմը սովորականից դուրս հանդիստ էր այս անգամ։ Նա իր սովորական աղմուկներով այլ ևս չէր ընդհատում ողերթած հոետորին. ձախակողմը բոլորովին իրաւացի կերպով յարգում էր պ. Յակոբի հոետորական ընդունակութիւնները. միայն պէտք է ասած, որ այս ատենախօսութիւնը չէր նմանվում բնաւ մի պարափնտաղական վիճաբանութեան. դա աւելի նմանվում էր մի փիլիսոփայական ճառի, որը կարծես կազմված էր հէնց այն նպատակով, որ Լուվէնեան համալսարանի կամարների տակ հնչեցնելով, հոգեբանական դժկտօրի տիտղոս ստանայ։

Ինչպէս արդէն ասացինք, պ. հոետորը խօսելով անասունաւորութեան մասին, թուեց մի առ մի Օգիւստ-Սօնտ, Կօնդօսէ, Լիտտէ, Բրնան, Վօքտ, Վիլիսօլ, Բիւխանէր և Մօլէ-շօտ. այս բոլոր անձնաւորութիւններն անցան հոետորի առջևով իրանց վարդապետութիւններով և փիլիսոփայութիւններով, և այդ բոլոր խօսակցութեանց պ. հոետորը միայն այն եզրակացութեան հասաւ, որ ուրեմն աշխարհ հիւ երեսին եղել են անասունաւոր մարդիկ։ Ճառը հիմնաւրէ էր, և ամենքն ուշադրութեամբ լսում էին. յոյժ բարի, բայց ուր է հէտեանքը, 1841 թվ. օրէնքի վերաքննութիւնը ինչ կապ ունի անասունաւոր մարդոց հետ։ Այս դեռ բաւական չէ, հոետորը, ապացուցանելու համար թէ անասունաւորութիւնը տարածվում է այժմեան հասարակութեան մէջ, նա մէջ է բերում մի քանի բրժշկական գրքեր, որոնց մէջ նա ցոյց է տալի այն փիլիսոփայական վտանգաւոր ձգտումները, որոնց արտայայտում են նրանց հեղինակները։ Ճշմարիտ է, որ շատ բժիշկներ կան, որոնք մատերիալիստ են, բայց գիտնականների կարծիքը, որ ամեն օր ուսումնասիրելով կեանքի զանազան աղբիւրներ, և կամ Ֆիզիոլոգիական հետազոտութիւններով եթէ նրանք Աստուածութեան մասին այս ինչ կամ այն ինչ զարափար են կազմել, դա ինչ կապ կարող է ունենալ օրէնքի վերաքննութեան հարցի հետ։ Այս բոլորը միայն վերացական մտքեր են, և դրանցով ոչինչ եզրակացութեան չէ կարելի հասնել։

Հարցին վերաբերեալ միակ բանը, որ ասաց պ. հոետորը, դա բարոյականութիւնն է. դրա մասին նրա երկար ու բարակ խօսակցութեանց այս միայն կարելի է ասել, որ նրա կարծիքով բարոյականութիւնը ոչինչ կապ չունի քրիստոնէական վարդապետութեան հետ։ Իսկ խօսել այսպէս, դա կը նշանակէ բարոյականութիւնը կրօնից բաժան համարել։

Ձեռնասիրի նախկին միտնարից յետոյ, Բրիւսէլի պատգամաւոր պատուելի ժօտորան սկսեց խօսել։ Նա արդէն յայտնի է իր չափաւոր, համեստ, բայց պերճ ատենախօսութեամբ. նա բնաւ վերացական մտքեր չը յայտնեց. նա կանգնեց օրէնսդրական հաստատ հոդի վրա, և բացատրեց սահմանադրական կանոնադրութեան ամենապարզ սկզբունքները։ Սահմանադրութիւնը կրօնը իրաւաբանական հիմք չէ համարում։ Եւ միայն մարդ պէտք է կրեականների չափ յանդուգն լինի պահանջելու, որ պետութիւնը վճարէ, իսկ եկեղեցին կառավարէ. հէնց այս է պատճառը, որ կրեականները բնաւ չեն կամենում 1842-ի օրէնքից բաժանվել. այդ օրէնքը շատ օգտաւէտ էր Վատիկանին և իր արբանաւաններին։

Պ. Ժօտորան բոլորովին համաձայն է, որ միջին կուլած բարոյականութիւնը սովորովի ուսումնարաններում. նա ստում է, որ այդ միակ բարոյականութիւնն է, որին կարելի է թողլ տալ սովորյալ ուսումնարաններում, որովհետեւ դա միակ բարոյականութիւնն է, որ

